ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Մայ Մարկետ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/273 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Չինաստան	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին թվով 175 պայուսակ և յուրաքանչյուրում ներառված 5 տեսակի գրենական ապրանքների ձեռքբերում և տրամադրում: Նշված բոլոր ապրանքները /175 պայուսակ, որոնցից յուրաքանչյուրում պետք է դասավորված լինեն բոլոր 5 անուն գրենական ապրանքները՝ նշված քանակներին համապատասխան/ մատակարարի կողմից պետք է մատակարարվեն պատվիրատուին՝ որակյալ, նոր և չօգտագործված վիճակում: Մասնակցի կողմից անհրաժեշտ է ներկայացնել ապրանքային նշան, ֆիրմային անվանում և արտադրողի վերաբերյալ տեղեկատվություն: Փաթեթի գինը իր մեջ ներառում է ապրանքների առաքումը վերը նշված հասցե: Փաթեթների բեռնաթափումը և մատակարարումը նշված հասցե պետք կատարվի մատակարարի կողմից: Տեսականին պետք է նախապես համաձայնեցվի պատվիրատուի հետ: Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանքները ենթակա են ետ վերադարձման: ՊԱՅՈՒՍԱԿ - աշակերտական, առնվազն 30-35 սմ լայնությամբ և առնվազն 40-45 սմ բարձրությամբ, առնվազն 10-12 սմ խորությամբ, քաշը՝ առնվազն 300-400 գրամ, հարմարեցված ձեռքով բռնելու (բռնակ) և ուսերին գցելու համար: Պետք է պատրաստված լինի ամուր գործվածքից՝ պոլիէսթեր 100%, առանց յուրահատուկ հոտի, էկոլոգիապես մաքուր,

		առավելագույնս ջրադիմացկուն: Պայուսակը պետք է լինի միագույն և ցանկալի է լինեն տարբեր գույների (սև, մոխրագույն, կապույտ, վարդագույն, մանուշակագույն, կանաչ) կամ հայատառ ձևավորումներով: Պայուսակը դրսից պետք է ունենա առնվազն երկու կայծակաճարմանդե գրպաններ: Պայուսակը ներսից պետք է բաժանված լինի երկու կամ երեք մասի: Պայուսակի կայծակաճարմանդները պետք է լինեն ամուր ու որակյալ, դրանց բռնակները երկաթյա: Պայուսակի հետնամասը պետք է լինի հատուկ օրթոպեդիկ գոգավորությամբ: Պայուսակի ուսակալները պետք է լինեն ամուր և փափուկ ամրակներով: Պայուսակի վրա պետք է լինեն հատուկ լուսային ռեֆլեկտորային ծածկ կամ մասնիկներ: Պայուսակի երկու կողմերից պետք է լինեն ջրամանների գրպաններ: Պայուսակի վրա ցանկալի է ամրացված լինի բեյջ՝ տվյալներ լրացնելու համար: Պայուսակի ներսի հատվածը պետք է որակյալ աստառապատված լինի: ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՏՐ 96 ԹԵՐԹԱՆԻ- 4 ՀԱՏ /2 հատ տողանի և 2 հատ վանդակավոր/՝ աշակերտական, 96 թերթանի, հաստ ստվարաթղթե շապիկով, նկարազարդված Հայաստանի տեսարժան վայրերի նկարներով կամ հայ անվանի մարդկանց լուսանկարներով, չափը՝ A5/148x210մմ/, տպագրությունը օֆսեթ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՏՐ 48 ԹԵՐԹԱՆԻ - 10 ՀԱՏ /5 հատ տողանի և 5 հատ վանդակավոր/՝ աշակերտական, 48 թերթանի հաստ ստվարաթղթե շապիկով, նկարազարդված Հայաստանի տեսարժան վայրերի նկարներով կամ հայ անվանի մարդկանց, լուսանկարներով, չափը՝ A5/148x210մմ/, տպագրությունը օֆսեթ: ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՏՐ 24 ԹԵՐԹԱՆԻ - 10 ՀԱՏ /5 հատ տողանի և 5 հատ վանդակավոր/՝ աշակերտական, 24 թերթանի հաստ ստվարաթղթե շապիկով, նկարազարդված Հայաստանի տեսարժան վայրերի նկարներով կամ հայ անվանի մարդկանց, լուսանկարներով, չափը՝ A5/148x210մմ/, տպագրությունը օֆսեթ: ՏԵՏՐ 12 ԹԵՐԹԱՆԻ - 10 ՀԱՏ /5 հատ տողանի և 5 հատ վանդակավոր/՝ աշակերտական, միագույն, չափը՝ A5/148x210մմ/, տպագրությունը օֆսեթ, գծված լուսանցքներով: ԳՐԻՉ - 10 ՀԱՏ՝ բարձր որակի, գնդիկավոր, 0.5մմ հաստության, կապույտ միջուկով, ռետինե բռնակով, թափանցիկ պատյանով:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Май Маркет в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/273 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
1		